# Արցախի ժողպատգամավորները բավարարված չեն ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հանձնաժողովի գործունեությունից

ԽՍՀՄ ժողպատգամավորներ Հենրիկ Պողոսյանը եւ Վահան Գաբրիելյանը հեռագիր են հղել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահ Անատոլի Լուկյանովին, որում խնդրում են նրա աջակցությունը կազմակերպելու ԼՂԻՄ-ի ԽՍՀՄ ժողպատգամավորների հանդիպումը միութենական խորհրդարանի հանձնաժողովի անդամների հետ:

Հեռագրում նշվում է, թե արդեն երրորդ օրն է, ինչ ինքնավար մարզում գտնվող հանձնաժողովը, որը գլխավորում է Վլադիմիր Ֆոտեեւը, հրաժարվում է հանդիպել պատգամավորների, ինչպես նաեւ մարզի ղեկավարության հետ:

Ադրբեջանական հանրապետական կոմիտեի անդամների ուղեկցությամբ հանձնաժողովի անդամները գլխավորապես այցելում են ադրբեջանցիներով բնակեցված շրջանները: